ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, ուրբաթ. – Գ օր Մանդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն» (Ղուկաս ԺԲ 32) բնաբանով (տե՛ս էջ 41):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Հունվարի 3-ին, կիրակի. – Է կիրակի Ցիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Եւ եղեւ հակառակութիւն ի մէջ նոցա թէ ո՛վ ի նոցանէ համարիցի մեծ» (Ղուկ. ԻԲ 24) բնաբանով:

Հունվարի 4-ին, երկուշաբթի. – Զ օր Մանդեան պահոց:

Այսօր «Էջմիածին» ամսագրի խմբագրակազմը Վեհարանում շնորհավորեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի Ամանորը: Գլխավոր խմբագրի պաշտոնակատար Մարիամ Վարդանյանը Սրբազան Հորը ներկայացրեց խմբագրակազմի անդամներին, հակիրճ նկարագրեց կատարվելիք հետագա աշխատանքների ընդհանուր ծրագրերը և ողջ աշխատակազմի անունից Սրբազան

Հորը խնդրեց Վեհափառ Հայրապետին մաղթել քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր գործունեություն և շուտափույթ վերադարձ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Հունվարի 5-ին, երեքշաբթի. - Ճրագալույց Մանդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Միքայել Ծ. Վրդ. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդին պատշաճող քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը (տե՛ս էջ 43): Ս. Պատարագից առաջ չորս սարկավագներ Ավագ Ս. Խորանից ընթերցեցին Դանիելի թուղթը:

Ս. Պատարագից հետո ողջ միաբանությունն ու ուսանողությունը, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի գլխավորությամբ, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողության ներքո շարժվեցին դեպի միաբանական սեղանատուն՝ ցնծությամբ նշելու Տիրոջ Մանդյան ավետիսը:

Հունվարի 6-ին, չորեքշաբթի. - Տօն Մանդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սուրբ Մանդյան պատգամը՝ ուղղված հայ ժողովրդին (տե՛ս էջ 3):

Այնուհետև Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողությունը:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ կառավարության, ՀՀ Ազգային ժողովի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, մեծաթիվ հյուրեր:

Հունվարի 7-ին, հինգշաբթի.- Բ օր Մանդեան: Ցիշատակ մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Տիրայր քհն. Գրլրճյանը:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ վասն համորեն ննջեցելոց:

Հունվարի 8-ին, ուրբաթ.- Գ օր Մանդեան:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանն ընդունեց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովին:

Հանուն Վեհափառ Հայրապետի Սրբազան Հայրը ողջունեց պրն. Դրյուկովի անդրանիկ այցը Մայր Աթոռ՝ հույս հայտնելով, որ հաջորդ հանդիպումը Մայր Աթոռում կկայանա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Պրն. դեսպանը նշեց, որ հայ-ռուսական պատմական սերտ կապերը այսօր ևս շարունակվում են բազմակողմանիորեն զարգանալ քաղաքական, տնտեսական ու հոգևոր ասպարեզներում:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու երկրներում հոգևոր-եկեղեցական կյանքի, հոգևոր վերազարթոնքի և այդ հարցում Եկեղեցու և պետության ունեցած դերի մասին: Սրբազան Հայրն ընդգծեց, որ պետությունը, ստեղծելով անհրաժեշտ օրենսդրական դաշտ, կարող է միայն նպաստել Եկեղեցու գործունեությանը, սակայն ժողովրդի հոգևոր դաստիարակության հիմնական գործը Եկեղեցունն է:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաև Ռուսաստանում Հայոց Եկեղեցու թեմական կառուցվածքին: Պրն. Դրյուկովը հայտնեց նաև, որ մոսկովյան իշխանությունների կողմից հողատարածք է հատկացվել Հայոց թեմին՝ նոր եկեղեցի կառուցելու նպատակով:

Առաջին անգամ լինելով Մայր Աթոռում, դեսպանը շրջեց Սբ. Էջմիածնի թանգարաններում, դիտեց Մայր Աթոռում պահվող արվեստի գանձերը և եկեղեցական արժեքները:

Հունվարի 10-ին, կիրակի. - Ե օր Մենդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշեն աբեղա Սանոյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ, հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի» (Շարական) բնաբանով (տե՛ս էջ 52):

Հունվարի 13-ին, չորեքշաբթի. - Ը օր Մենդեան: Տօն անուանակոչութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը:

***

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանն ընդունեց Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Մոհամադ Ֆարհադ Քոլեղնիին:

Հանուն Վեհափառ Հայրապետի ողջունելով հյուրին, Սրբազան Հայրը ուրախությամբ հայտնեց, որ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի կազդուրման շրջանն ընթանում է բարեհաջող:

Հանդիպման ընթացքում ծավալվեց մտերմիկ զրույց: Անդրադառնալով Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյա հոբելյանին, պրն. Ջոլեզին հայտնեց, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը ևս նախատեսում է իր մասնակցությունը բերել հոբելյանական միջոցառումներին:

Հիշատակելով Հայաստան-Իրան դարավոր պատմա-մշակութային կապի մասին, Գարեգին Սրբազանն իր ուրախությունը հայտնեց Հայոց Եկեղեցու մեծ հոբելյանի հանդեպ Իրանի ունեցած ուշադրության համար:

Հրաժեշտից առաջ պրն. Ջոլեզին խնդրեց Սրբազան Հորը՝ իր ողջույնները և ապաքինման մաղթանքները փոխանցել Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին:

***

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով, որի ընթացքում քննարկվեցին մի քանի հարցեր Արմավիրի թեմում տարվող քարոզչական աշխատանքների վերաբերյալ:

Տ. Զարեհ աբեղա Կաբաղյանը միաբանակից եղբայրներին իր մտածումները հայտնեց կիրակի օրը Ս. Պատարագին տրվելիք քարոզի վերաբերյալ:

Հունվարի 14-ին, հինգշաբթի.- Տօն Մենդեան Յովհաննու Կարապետին:

Այսօր Մայր Տաճարում, Ս. Հովհաննես Մկրտչի Խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քհն. Ֆրանկյանը:

Հունվարի 17-ին, կիրակի. - Ա կիրակի զկնի Մենդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Եվ երբ գինին պակասեց, մայրը Հիսուսին ասաց. «Գինի չունեն»» բնաբանով:

Հունվարի 18-ին, երկուշաբթի.- Սրբոցն՝ Անտոնի, Տրիփոնի, Պարսամայ եւ Ոնոփրիոսի ճգնաւորացն:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածին իր անդրանիկ այցը կատարեց Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Պանայոտիս Ջոգրաֆոսը:

Հանուն Վեհափառ Հայրապետի ողջունելով հյուրին, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը շնորհավորեց պրն. Ջոգրաֆոսին նոր պաշտոնի ստանձնման առիթով և մաղթեց արդյունավետ գործունեություն, որը կնպաստի երկու ժողովուրդների բարեկամության և միջպետական կապերի ամրապնդմանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց հայ և հույն ժողովուրդների, Եկեղեցիների բարեկամության ու կապերի մասին: Այս առիթով Սրբազան Հայրը հիշատակեց Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի փոխադարձ այցելությունները, ինչպես նաև անցած տարի Աթենքում հաջողությամբ կազմակերպված հայ եկեղեցական գանձերի ցուցահանդեսը: Սրբազան Հայրը շնորհակալություն հայտնեց նաև մարդասիրական այն օգնության համար, որ տրամադրվում է Հունաստանի կառավարության կողմից Հայաստանին և Հայոց Եկեղեցուն:

Տեղեկանալով մայիս ամսին Հունաստանի նախագահի Հայաստան կատարելիք այցի մասին, Սրբազան Հայրը հույս հայտնեց, որ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում նախագահին կընդունի արդեն Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ինչպես տեղեկացրեց պրն. Ջոգրաֆոսը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելելու ցանկություն է հայտնել նաև Աթենքի և Համայն Հելլադայի Արքեպիսկոպոսը:

Հունվարի 20-ին, չորեքշաբթի. - Պահք:

Այսօր, երեկոյան, Ս. Հռիփսիմե վանքում տեղի ունեցավ միաբանական ժողով, որի ընթացքում քննարկվեցին քարոզչության, ժողովրդի փետրվարի 14-ին կայանալիք Տեառնընդառաջի տոնի խորհուրդի լուսաբանմանը վերաբերող որոշ հարցեր:

Գնորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը իր մտածումներն արտահայտեց կիրակի օրը Ս. Պատարագին տրվելիք քարոզի վերաբերյալ:

Հունվարի 24-ին, կիրակի. - Բ կիրակի զկնի Մեծի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան, Գնորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Ես եմ, մի երկնչիք» (Հովհ. Զ 20) բնաբանով (տե՛ս էջ 50):

Հունվարի 31-ին, կիրակի. - Գ կիրակի զկնի Մեծի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Ես եմ հացն կենաց» (Հովհ. Զ 35) բնաբանով: